շիրեան կը տիրէր երկրի վերայ հարիւր փարսաղի չափ մինչեւ Ալանաց դուռը, որտեղ կային 360 քաղաքներ. պարսից թագաւորը գրաւեց Բաբէլ-աբուաբ, Տաբարսարան եւ Բալանջար, կառուցեց Կարին եւ այլ բազմաթիւ քաղաքներ, ուր նա պարսիկներ բնակեցրեց։ Ապա Խազարը յետ խլեցին այն, ինչ որ պարսիկները նոցանից առել էին. Հայաստան մի առ ժամանակ մնաց նոցա ձեռքում, մինչեւ Յոյները յաղթեցին նոցա եւ դրեցին Զորրորդ Հայոց վերայ "մարզպան"[1] տիտղոսով թագաւոր։ Բազմաթիւ (հայ) իշխաններ ցրուեցան իրանց տոհմական անառիկ ամրոցներում եւ դղեակներում։

18 թ. Աբու Օբայդայի. Ջառռահ ուղարկեց Իյադ ի. Ղանմ Ֆիհրիին Միջագետք, որ անդադար պաշարմամբ նուաճեց Ռաքքայ, Սրուճ, Ուռհայ, Մծբին եւ երկրի այլ քաղաքները՝ առանց պատերազմի, դնելով նոցա վերայ հողահարկ, իսկ իւրաքանչիւր ստրուկի վերայ՝ 4, 5 եւ 6 դենար։

22 թ. նուաճեցաւ Ատրպատական Մուղէյրայի ի. Շոբայի առաջնորդութեամբ։

31 թ. Օսման ուղարկեց Հաբիբ ի. Մասլամայ Ֆիհրիին Հայաստան եւ ապա Սալման ի. Ռաբիայ Բահլիին՝ նորան օգնութեան։ Երբ նա եկաւ Հաբիբի մօտ, երկուսի մէջ վէճ ծագեցաւ պատերազմական փառքի համար. պատճառը հետեւեալն էր. Հաբիբ ի. Մասլամայ նուաճել էր Հայաստանի մի մասը, երբ Օսման դրեց Սալմանին կառավարիչ երկրի վերայ, որը եկաւ Փայտակարան. բնակիչք դիմաւորեցին նորան եւ խաղաղութիւն կապեցին նորա հետ. այնտեղից նա անցաւ Պարտաւ, որի ժողովուրդը հաշտութիւն հաստատեց նորա հետ

---

1 Լաւագոյն է հարկաւ "մարզպան" (المرزبان) քան "մաւրիան" (الموريان) կարդալ։